ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
№ 1

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ է՝

Թաւրիզում . . . . . 14 դրան
Գաւառներում . . . . . 20 դրան

ՀԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ր. 50 կ.
Թուրքիա . . . . . 50 դրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանկ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Զորրորդ „ „ „ 5 „

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal Armén. «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ادارهٔ روزنامهٔ « میطك »

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրաշներից թողուած զրեն պարզ, մաքուր և անպայման սղրի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք „ա“ ի և „վ“ ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը ապել մեր ընդունած ուղղագրութեամբ -ու-ով:
4. Չապուած կարճ յօդուածները չեն վերադարձուիր: Ուղարկուած և չապուած երկար նիւթերը յետ նալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը:
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անունով միայնակ չի կրի յօդուածագրի անունը պարտադիր:
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս կրնայ դիտել Հ համարում պատասխանատուութիւնից:
7. Չապուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տայիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 դրան 10 շահի:

№ 1 (1912 թ.) ՇԱԲԱԹ 26 ՅՈՒՆՎԱՐ 1913 թ. № 1

ԲԱՑՈՒԱԾ Է „ՄԻՏՔ“-Ի 1913 ԹՈՒԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Թաւրիզում տարեկան 14 դրան կէս տարուան 8 դ.
Թաւրիզից դուրս „ 20 „ „ „ 12 դ.
Արտասահման „ 4 ր. 50 կ. „ 2 ր. 40 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱԳԱԶԻՆ ԲՕՆ-ՄԱՐՇԷ

Հիմնուած 1897 թ.

Մագազինը ընդարձակելով ամենշաբաթ ստացուում են Եւրոպայից և Ռուսաստանից ամեն տեսակ ապրանքներ, բոլորովին թարմ և ժամանակաւորապէս:

Կանացի փէշեր, շալ կտորներ, չիքլացուներ, ամեն տեսակի հաշիաներ և լէնթեր:

Թարմ շոկոլատ՝ Suchard, Tobler le Cailler գործարանների. կակաո, Հէնէսի կանեակ, վօսկա, ֆրանսիական կարմիր, սպիտակ և քաղցր գինիներ, լիքօռներ, և շամպանիա: Եւրոպական ամեն տեսակի ձկներէն՝ Սարդին, թոն, սոմոն և այլն: Զիւթաիւղ, Ռուսական և Անգլիական բիսկիթներ, սիթրոնադ և օրանժատ: Ռուսական և տաճկական պապիրոսներ: Տղամարդկանց մահուզէ գլխարկներ և այլն և այլն:

Սպասաւորմէ շատով մեծ քանակութեամբ կանացի, տղամարդկանց և երեխաների կօշիկներ, կանացի և տղամարդկանց ճաշակաւոր կաստիւմացուներ, Ռուսական ամեն տեսակի կանֆէթներ և մուրաբաներ:

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ 60-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԹԻՒ

Ժողովրդի դրամներով

Հայ ժողովուրդ, ի դէմս Յոբելեանական յարգոյ յանձնախմբի՝ Արամեան դպրոցն է քեզ կոչ ուղղում:

Ի՞նչ աւելի ընտանի, ի՞նչ աւելի հարազատ ձայն, քան հայ դպրոցի դիմումը դէպի քեզ, գու՛ սննկուն և բազմակարօտ հայ ժողովուրդ:

Գուցէ այլ դէպքերում կարելի է մերժել ամենքին և ամեն ինչ, բայց ներկայումս բացասել հայ դպրոցին, դա արդարացում չունենայ և մարդկային էլ չի լինի այդպիսի կծուռ վերաբերմունք:

Հայրենի աւանդներից, ազգային սեպհականութիւններից բարձրագոյնն ու թանկագինը, մեր եկեղեցու կողքին և նրան հաւասար, դա մեր հայ դպրոցն է:

Աւա՜ղ, որքան թանկագին է և փայփայելի մեր հայ դպրոցը, այնքան նա քիչ է ինամուած, անուշադիր թողնուած և մատնուած կարիքների:

Վաղուց է բարձրաձայն լսւում հայ դպրոցի աղաղակող կարիքների մասին, բայց տարաբաղդաբար անհրաժեշտութիւնն ստիպում է արտացաւներին՝ էլի աղաղակել, էլի դիմել հայ ժողովրդի առատաձեռնութեան:

Հայ դպրոցը՝ հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գլխաւոր ազդակն է ու ոգին: Փակէք մի բոպէ հայ դպրոցի դռները և փակուած կլինի հայ ժողովրդի շնչառութեան գլխաւոր երակը և նա (հայը) կմեռնի:

Եթէ հզօր ազգերը և մեծ պետութիւնները միլիարդներ ծախսելուց յետոյ իրենց միլիտարիստական ոյժերի վրայ, դարձեալ իրենց ազգային գոյութիւնը բուռ-կանտաչափ ապահովուած չեն զգում և հրամայական են համարում պետական պաշտպանութիւն անտնով մի տանձին մարմին կապել, ապա տեսէք որքան հրամայական է մեզ նման մի ցաք ու ցրիւ, անտէր և փոքր ժողովրդի համար ծայրագոյնս աշխատել մեր ազգային գոյութեան պահպանութեան համար: Իսկ մեր ազգային գոյութիւնն այլ կերպ ապահովել չենք կարող, քան եթէ վառ ու շէն պահելով հայ դպրոցը:

Ահա հայ դպրոցներից այժմ մէկի, Արամեան դպրոցի, 60-ամեայ յոբելեանի հարցն է դրուած հրապարակում:

Եւ մեր թերթի ներկայ համարում ևս տպուած են 60-ամեայ յոբելեական յանձնախմբի երկու կոչերը: Դրանք խմբագրուած ու կազմուած են շատ գեղեցիկ և բանաւոր կերպով: Դրանցից ակնյայտնօրէն արտացոլում է ՀԵՐՄ վստահութիւն դէպի հայ հասարակութիւնն ու նախկին սաները, որոնցից յոբելեանական յանձնախումբը նիւթական սրտագին օժանդակութիւն է սպասում:

Այժմ մնում է, որ մեր ժողովուրդն ու յոբելեար դպրոցի նախկին սաները մատծեն պարտականի հատուածի այս անդրանիկ դպրոցի ապահովութեան և յարատևութեան մասին:

Թող ոչ ոք պինդ չփակի իւր քսակի բերանը: Թող ամենքը ինչպէս իրենց սրտերը, նոյնպէս և իրենց քսակները լայն բացեն նուիրաբերութիւն անելու 60 տարուց ի վեր լոյս ու ճշմարտութիւն տարածող Արամեան համեստ դպրոցին:

Արամեան դպրոցի սաներից այսօր մենք տեսնում ենք հրապարակի վրայ 1 կարգի վաճառականներ, բանկերի հաշուապահներ, հայվաճառականների գործակատարներ, մատենագրներ, բժիշկներ, ֆինանսական ծառայողներ, նախկին ուսուցիչներ, բարեկեցիկ տիկիններ և օրիորդներ և այլն: Եթէ սրանցից ամեն մէկը, թէ կուզ ամենահամեստ մի նուէրով, արձագանք տայ յանձնաժողովի կոչերին, դիտէք թէ ի՞նչ պատկառելի չափի կհասնի դպրոցի անձեռնմխելի ֆոնդը:

Հայ վաճառականը հայ դպրոցի, հայ կուլտուրայի համար աշուել է միշտ, կատ և այս դէպքում, սակայն ներկայ յոբելեանի ժամանակ հրապարակ եկ և դու, հայ ժողովուրդ և գիտասիրա՛ ու յօժարակա՛մ բեր քո դրամական նուէրները ի կրթութիւն քո հարազատ զաւակների, որ Տիարբանեան և Հայրապետեան հոգեսպան օտար դպրոցներում, ի յարատևութիւն քո իսկ մայրենի Արամեան դպրոցի, որ նրա ճակատին գրոշմուի՝ թէ սա պահւում ու գործումէ ժողովրդի դրամներով:

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՑ „ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ“ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿ

[1851-1911]

1911-ին լրանում էր Թաւրիզի հայոց Արամեան դպրոցի հիմնարկութեան և գործունէութեան 60-րդ տարին: Հակառակ, սակայն, ժամանակի հոգաբարձութեան բուռն ջանքերի և նոյն մարմնի թեմիս առաջնորդին տարած բազմադիմի առաջարկների, հրնարաւոր չեղաւ գլուխ բերել դպրոցի 60-ամեայ յոբելեանը, որովհետև ընդհանուր Պարսկաստանում և յատկապէս Թաւրիզում տեղի ունեցող քաղաքական փոթորկալից դէպքերը արգելք էին դառնում ամեն մի նման կուլտուրական գործի իրականացման:

Սակայն այն, ինչ հնարաւոր չեղաւ անել արգելոցիթ հանգամանքների և գահավիժող դէպքերի պատճառով, ձեռնարկւում է այժմ:

Համեստ ծագումն է ունեցել Արամեան դպրոցը, որի հիմնադիրն է եղել Ս. Էջմիածնի միաբան՝ սրժա-

նայիշատակ Սահակ եպիսկոպոս Սաթունեանը։ Այնուհետև բարեսէր քաղաքացիք միահամուռ ջանքերով նպաստել են նրա տնտեսական և ուսումնական մասի բարձրացման, հասցրել նրան միջնակարգ դպրոցի և այդպիսով դարձրել այդ դպրոցը մի լուսատու փարոս իւր խաւար և անհրապոյր շրջապատի համար՝ աւելի քան ամբողջ վաթսուն տարիների գոյութեամբ։

Եւ այսօր, երբ արդէն լրացել է նրա 60-ամեայ գոյութեան տարեշրջանը, դպրոցի պատուարժան հոգաբարձութեան և Թաւրիզի հայ հասարակութեան որոշ մասի կողմից պարտք է դրուել մեզ վրայ, իբրև յոբելեանական ընտրեալ յանձնախմբի՝ ըստ արժանոյն կատարել նրա բեղմնաւոր և բազմավաստակ գործունէութեան յոբելեանը, այդ առթիւ դիմումներ ու հրաւէրներ անել մեր կրթասէր ազգայիններին, հիմնարկութիւններին, մամուլի օրգաններին և սպասել նոցա բարոյական և նիւթական աջակցութեան՝ ապահովելու պատկառելի անցեալ ունեցող Արամեան դպրոցի գոյութիւնը։

Վերջին տասնամեակում Թաւրիզի մի կարգ հայ առևտրականների սը նանկութիւններն ու տնտեսական տագնապները իրենց անդրադարձումներն ունենալով և մեր ընդհանուր դպրոցական կեանքի վրայ, որոշ չափով և վնասել են Արամեան դպրոցի ապահովութեան գործին։

Վերականգնելու համար օգտաշատ դպրոցի նախկին ապահովութիւնը, ուսումնական և տնտեսական մասի երբեմնի նախանձելի դիրքը, յանձնաժողովս իրեն սեպուհ պարտականութիւն է համարել և նպատակ դրել՝ կազմել մի անձեռնմխելի ֆոնդ, որի միայն տոկոսիքներով և կողմնակի այլ եկամուտներով դպրոցը պէտք է յարատև և անսայթաք գոյութիւն ունենայ՝ անխափան կատարելու լուսաւորողական իր մեծ գործը այս աղքատ երկրի բազմակարօտ ժողովրդի համար։ Յանձնաժողովս վստահ ու համոզուած է, որ իւր այս միտքը ջերմ ընդունելութեան կհանդիպի ընդհանուր հայ ժողովրդի բոլոր խաւերում և ամենքը-լինին նախկին սաներ, բարերարներ և կրթասէր անձինք—սիրայօժար կերպով իրենց լումայից բաժին կհանեն պատկառելի մի չափի հասցնելու յիշեալ ֆոնդը, որպէս զի յոբելեար Արամեան դպրոցը շատ այդպիսի 60-ամեակներ բոլորել կարողանայ ի լուսաւորութիւն, ի զարգացումն և ի յառաջադիմութիւն իւր շրջապատի։

Յոբելենական տօնը կատարուելու է 1913 թուի Փետրվար 19-ին, Ս. Ղևոնդեանց տօնի օրը։

Յոբելեանին վերաբերեալ ուղերձներ, շնորհաւորութիւններ դիմումներ և այլն ուղղելու են յանձնաժողովիս նախագահ Զաքարիա Նազարբէկեանին (Z. Nazarbekian, Tauris Perse) իսկ դրամական առաքումներն ուղղելու է Յանձնաժողովիս գանձապահ Թադէոս Աֆթանդիլեանին (Tadéos Aftandilian Tauris Perse)։

Յոբելենական յանձնախմբի
Նա-խագահ՝ Զ. Նազարբէկեան
Փոխ նախագահ՝ դօքտ. Պ. Ասլանեան
Գանձապահ՝ Թ. Աֆթանդիլեան։

Անդամներ՝
Զ. Բուդաղեան
Յ. Ջանեան
Ս. Մելիք Սարգսեան
Մ. Տէր Յակոբեան։

Թաւրիզ. 1 Դեկտեմբեր 1912 թ.

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆ

Սիրելի սան ԱՐԱՄԵԱՆ դպրոցի

Երջանիկ ենք աւետելու Ձեզ, որ արդէն լրացել է Ձեր հոգևոր մօր-Արամեան Դպրոցի-գոյութեան վաթսուն տարին և այդ պատճառով դպրոցի պատուարժան հոգաբարձութեան և մի հասարակական ժողովի կողմից քաղցր պարտք է դրուել մեզ վրայ կազմակերպել նրա արդիւնաւէտ գործունէութեան 60-ամեայ յոբելեանը։

Մեր պարտքն ենք համարում, սիրելի սան, առաջին ծանուցումն ու դիմումը ձեզ անել այն հաստատ և անվրէպ յուսով, որ դուք իբրև նրա բարերարեալն ու հարազատը՝ շատ մօտ կհամարէք Ձեր սրտին նրա յոբելեանն ու նիւթական ապահովութեան հարցը։ Ուստի հասկանալի է, որ Ձեր կողմից անարձագանք չեն մնայ մեր այն առաջարկները, որոնցով միտք ու նպատակ ունինք յաւերժացնել այդ 60-ամեայ յոբելեանը և միաժամանակ հաստատ հիմունքների վրայ դնել յոբելեար դպրոցի յարատև գոյութիւնը։

Ո՞վ աւելի նախանձախնդիր, ո՞վ աւելի առատաձեռն և ո՞վ աւելի պատրաստակամ դէպի այդ գեղեցիկ նպատակը-դպրոցի ապահովումն ու յարատև գոյութիւնը--քան եթէ Դուք, թանկագին սան, որ Ձեր մանկութեան երազ օրերն ու Ձեր հասակի լաւագոյն տարիքը անց էր կացրել անմոռանալի Արամեան դպրոցում, ուր դուք հոգևոր, մտաւոր, բարոյական և ֆիզիքական կրթութիւն էք ստացել, ուր Դուք զինուելով գիտութեան անյաղթ զէնքով՝ յաջող ճամպայ էք բացել Ձեզ համար կեանքի կուռում՝ տէր լինելով յայտնի աստիճան հասարակական նախանձելի դիրքի և նիւթական ապահով կացութեան։

Արամեան դպրոցը որպէս հարազատ և հոգատար մայր, կաթոգին սիրով պահել խնամել է և մեծացրել է Ձեզ, երբ Դուք դեռ փոքր էիք, անզօր և կարօտ խնամքի ու ծարաւ ուսման։ Այժմ Ձեր նոյն մայրը բոլորել է երկարամեայ մի շրջան, պատել են ահա նրան ծերութեան կնճիռները, նա այժմ անոյժ է և կարօտ քնքշատար հոգացողութեան։ Ժամանակն ու տեղն է, որ Դուք այժմ փոխադարձաբար օգնութեան հասէք Ձեր այդ թանկագին մօրը։

Դպրոցն ըստ ամենայնի ապահովելու, նրա նախկին նիւթական բարոյական և ուսումնական դիրքը վերականգնելու համար, յոբելեանական յանձնաժողովս ձեռնարկել է կազմելու մի անձեռնմխելի ֆոնդ, որին առաւելապէս նպաստողները, ըստ քաղցը ակնկալութեան յանձնաժողովիս, անշուշտ լինելու են Արամեան եւ Ս. Աննայեան դպրոցների այն նախկին սաներն ու սանուհիները, որոնք իրենց հոգևոր մնունդն ու նախնական կրթութիւնը այնտեղ են ստացել։

Ահա օր և ասպարէզ, թանկագին սաներ ու սանուհիներ, երբ պէտք է գործով արտայայտուին Ձեր երախտագիտական զգացմանց ազնիւ թելադրանքները յապահովութիւն Ձեր սիրեցեալ Արամեան դպրոցի։

Վաթսուն երկար տարիներ անցնելուց յետոյ, այսօր, այս յոբելեանական խորհրդաւոր տարում, Ձեր մայրը ինքնաբաւական և կաթոգին Ձեզ է նայում, սիրելի սաներ, և դուք պէտք է արդարացնէք նրա յոյսերը Ձեր լաւագոյն զգացմանց և խորը գիտակցուած որդիական պարտաճանաչութեան մասին. պարտաճանաչութիւն, որ պիտի բոլորէ անթառամ պսակ Ձեր հոգեմօր ճակատին ի պատիւ Ձեր և ի հպարտութիւն նորա։

Յոբելեանական տօնը կատարուելու է 1913 թուի Փետրվար 19-ին, Ս. Ղևոնդեանց տօնի օրը։

Յոբելեանին վերաբերեալ ուղերձներ, շնորհաւորութիւններ, դիմումներ և այլն ուղարկուելու են յանձնաժողովիս նախագահ Զաքարիա Նազարբէկեանին (Z. Nazarbekiant, Tauris Perse) իսկ դրամական առաքումներն ուղղելու է յանձնաժողովիս գանձապահ Թադէոս Աֆթանդիլեանին (Tadéos Aftandilian, Tauris Perse)։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Казиміръ Тетмайеръ)

—

Երիտասարդ 17 ամեայ Նէֆցէն հասաւ վերջապէս աղջկան։ Նա յետեւից բռնեց նրա ձեռները ու շշնջաց «դու չես հեռանալ»։

Աղջիկը շնչասպառ փորձում էր հեռանալ սակայն երիտասարդը ամուր գրկել էր նրան։

—Դու չես հեռանայ, կրկնում էր նա։

Թողէք ինձ, հառաչանքով ասում էր աղջիկը։

—Օհո, իբր թէ չես ուզում։

Եւ նա աշխատում էր համբուրել անպայման աղջկայ շրթունքները, որը շուռ էր տալիս իւր գլուխը։

—Դու չես թոյլ տալիս, շշնջում էր նա կրքից վառուած։

—Թողէք ինձ. ես հիւանդ եմ, կրկնում էր աղջիկը։

—Ի՞նչ յիմարութիւն։

—Եւ հիւանդ եմ, բայց ոչ այն ցաւով որ դուք ենթադրում էք. ես առհասարակ հիւանդ եմ։

Եւ նա արտասանեց այդ խօսքերը այնպիսի տոնով ու նրա մարմինը այնպէս սարսռաց, որ երիտասարդը ակամայից դադարեց նրան իւր կրծքին սեղմելուց, սակայն իւր ձեռքերից բաց չթողեց։

—Ի՞նչ է քո հիւանդութիւնը։

—Երեք տարուց աւելի է ...

—Երեք տարուց աւելի, ուրեմն դու քանի տարեկան ես։

—Տասն և վեց։

—Տասն և վեց, կրկնեց զարմացած Նէֆցէն տասն և վեց, ասել է այն ժամանակ դու տասն երեք տարեկան էիր

—Այո, այո դեռ տասներեք. . . .

—Բայց ինչ պատահեց քեզ, սիրահարուեցիր արդեօք դու մէկի վրայ։

—Այո դուք գուշակեցիք... ես սիրահարուեցի... և ես իմ մարմինը երեսուն կոպէկով պիտի ծախէի...

—Երեսուն կոպէկով, ինչ են նշանակում քո այդ խօսքերը։

—Հայրս հրամայեց, մենք քաղցած էինք. տանը այլևս ոչինչ չկար, ամեն ինչ արդէն ծախուած և գրաւէր դրուած. և ահա մի օր նա ասաց ինձ. —Գնա Իւզիա, աղմկալից քաղաքը և եթէ դու որևէ մէկին դուր կգաս և նա կցանկանայ յօշոտել քո մարմինը, գնա դու նրա հետ և տուն բեր գոնէ մի քանի կոպէկ, թէ չէ բոլորս քաղցից կմեռնենք....

—Ասա, ո՞վ է քո հայրը և ի՞նչով է նա պարապում։

—Իմ հա՞յրը... նա այլևս ոչնչով չէ զբաղւում։

—Ի՞նչպէս, նա անգործ է։

—Այնպէս...մեռաւ։ Նա ծառայում էր ձեր հօր գործարանում։

—Դու ճի՞շտ ես ասում, նա ծառայում էր իմ հօր գործարանում. ասա՛ ինչու նա նպաստ չինդրեց։

—Սակայն այնտեղ երբ և իցէ նպաստ տուել են և կամ տալիս են հիմա...

—Ասա՛ ինչու՞ դուք այդպէս աղքատացաք։

—Հայրս վիրաւորեց վարպետին և դրա համար էլ արձակուեց։ . . .

—Իսկ ինչու՞ համար քո հայրը վիրաւորեց նրան։

—Գիտէք, իւր անուանակոչութեան օրը նա հարբեց և յաջորդ օրը աշխատանքի գնաց միայն երեկոյեան ժամի երեքին ու յանդիմանութիւն ստացաւ։

—Իսկ քո հայրը չբողոքե՞ց։

—Ասենք բողոքեց։

—Ինչպէ՞ս։

—Գնաց կառավարչի մօտ. . .

—Իսկ ի՞նչ հետևանք ունեցաւ այդ։

Կառավարիչն ասաց, որ շատ է ցաւում նրա վրայ, սակայն այլ կերպ վարուել չէ կարող, բայց եթէ արձակել նրան ի սաստումն միւսների. որովհետև ինչ կլինէր գործարանի դրութիւնը եթէ բոլորը հօրս նման վարուէին և եթէ 10,000 բանուորներ, իրենց անուանակոչութեան յաջորդ օրը գործարան չգնային...այդ ժամանակ ստիպուած պէտք է գործը դադարէր. այդպէս ասաց կառավարիչը

—Համաձայնուի՞ր, որ իսկապէս նա մասամբ իրաւացի է եղել։

—Դուք...նոյնպիսի աւազակ էք, ինչպէս և նրանք բոլորը—ատամների միջից ատելութեամբ ասաց նա։

Երիտասարդը բոլորովին բաց թողեց աղջկան ու նրա խօսքերը չլսած ձևանալով հարցրեց.

—Իսկ իմ հօրը նա դիմե՞լ է։

—Ի՞նչու՞ դիմէր, նրա համար միայն, որ Ձեր հայրը հրամայէր խլել նրանից իր տուած հագուստը։

Արիւնը խփեց երիտասարդի երեսը նա շփոթուեց ու ապշեց

—Լսի՞ր, ասաց նա մի քիչ յետոյ, դու երևի փողի կարիք ունիս։

—Ինչպէս թէ «երևի», ընդհատեց նրան աղջիկը, իհարկէ կարիք ունիմ։ Չէ որ տանը վեց հոգի կան, մայրս գործարանում մի քանի կոպէկ է միայն ձեռք բերում, իսկ ես և քոյրս Աստուած գիտէ թէ ինչքան ենք աշխատում։ Այժմ մի կերպ քարշ ենք տալիս մեր դրութիւնը։

Եւ ցինիկ ժպիտը փայլեց նրա դէմքի վերայ։

—Մեզ բոլորը ճանաչում են, աւելացրեց նա։

—Ինչպէ՞ս թէ ձեզ բոլորը ճանաչում են։

—Ձէ՞ք հաւատում, հարցրէք ուր ուզում էք, Պաստերնակ քոյրերի, Իւ-

Յոբելենական յանձնախմբի
Նախագահ՝ Զ. Նազարբէկեան
Փոխ նախագահ՝ Դոքտ. Պ. Ասլանեան
Գանձապահ՝ Թ. Աֆթանդիլեան
Քարտուղար՝ Ա. Աֆթանդիլեան

Անդամներ
Զ. Բուդաղեան
Յ. Ջանեան
Ս. Մ. Սարգսեան
Մ. Տէր Յակովբեան։

Թաւրիզ 1 Դեկտեմբեր 1912 թ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

15 Դեկս. Ռաշտ

Տաճիկների կրած անսպասելի պարտութիւնները բաւական սրտնեղութիւն են պատճառել հիասթափուած պարսիկներին։ Այլ ևս յոխորտալով չեն խօսում, հետզհետէ յուզուած տրամադրութիւնները հանդարտւում են։

Մի քանի օր առաջ վէճ է ծագում մի յոյնի և մի տաճկի մէջ, յոյնը պնդում է, որ արիւնռուշտ տաճիկ բռնապետութիւնը կատարեալ պարտուել, ևհալկան քրիստոնեայ չորս ազատարար պետութիւնները Կ.Պոլիսն արդէն վերցրել են։ Տաճիկը չկարողանալով իրեն զսպել, փայտով հարուածներ է հասցնում յոյնի գլխին։

Մահմեդականները Բալկանեան ներկայ պատերազմը համարում են կրօնական։ Իհարկէ և չարաչար սխալւում են և պիտի խոհեմութիւն ունենան ըմբռնելու պատերազմի իսկական պատճառները, ժամանակի ոգու անհրաժեշտ ստիպողական պահանջները և ապա ըստ այնմ պատասխանեն։

Ժամանակի ոգին պահանջում է թողնել ուրիշի իրաւունքի ոտնահարումը, կեանքի, գոյքի ու պատուի հետ անդթօրէն վարուելը, այլատարը ժողովրդին քաղաքականապէս և տնտեսապէս ստրկացնելը, որ գործը հասցրեց այսպիսի ամօթալի պատերազմի։

Ն.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

12 Դեկտ. Մուժամբար

Մեծարգոյ պարոն
Խմբագիր

Խնդրում եմ թոյլ տաք միտքի մէկ անկիւնում տպագրել հետևեալը.

Անցեալ տարի պ. Առաքել Յարութիւնեանը ամառանոց գալով մեր գիւղը և աննախանձելի տեսներով ուսումնարանի վիճակը, նուիրեց 5-թմն, իսկ ներկայ 1912 թուի ամառը նորէն գալով՝ հետը բերել էր Մոսկուայից ապսպրած մի ջահ մեր եկեղեցու համար։ Բացի սրանցից պարոնը խոստացաւ ամեն տարի 5-ական թմն. նուիրել դպրոցին։ Հրապարակով յայտնում ենք շնորհակալութիւն։

Ի դիմաց հոգաբարձութեան
Ալէքսան Մասեան

9 Յունվար Թաւրիզ

Այս տարի ես շնորհակալութեամբ Թաւրիզի ,,Աղքատախնամ'' ընկերութեան վարչութիւնից ի նպաստ չքաւոր աշակերտ-ուսինների զգեստների ստացել եմ քսան թուման։

Տեսուչ՝ Արամեան և Ս. Աննայեան երկսեռ դպրոցների։

Ա. Տ. Վարդանեան.

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Դեկտեմբերի 15-ին (1912 թ.) Լիլաւայի թատերասրահում յօգուտ դպրոցի և Հ. Բ. ընկերութեան տեղի ունեցաւ պարահանդէս թատերական—երաժշտական բաժիններով։

Թատերական բաժնում խաղացուեց նախ մի դրամատիքական էպիւտ ,,Դիւթող հնչիւններ'' (Հեղինակութիւն Ա. Գենցի և թարգմ. Յ. Յակոբեանի) Սա մի նորութիւն էր Թաւրիզի բեմի վրայ և իւր սիւժետով էլ բաւական հետաքրքիր. ափսոս որ այդ սիւժետի համար շատ նեղ շրջանակ է վերցրել հեղինակը. ուստի և շատ հարցեր, որ բնականօրէն զարթնում են պիեսայի ընթացքում, մութն են մնում բոլորովին, և հանդիսատեսը ոչ մի այլ հաստատուն գաղափար չէ կարողանում հանել այդ պիէսից, քան այն, որ «հնչիւնները» (ներկայ դէպքում խօսքը երաժշտական հնչիւնների մասին է) ընդունակ են «դիւթելու»մարդուն (ներկայ դէպքում կնոջ) և ստիպելու նրան ակամայօրէն ենթարկուել նրանց ազդեցութեան, անձնատուր լինել իւր ատած անձին, բոպէապէս մոռանալ՝ ում պատկանում է։ Չնայած դրան՝ խաղը բաւական սրպաւորիչ էր և լաւ մշակուած և Պ. Մելիք Աբրահամեանն ու օր. Զարուհի Թորգոմեանը նոյն գիշերուայ իրենց խաղով ցոյց տուին, որ արժանի են լաւ սիրողներ համարուելու։

Բացի յիշեալ էդիւտից, Լիլաւայի սիրողները խաղացին ինչ որ վոդեվիլանման բան «Փունչինելլա» անունով, որ աւելի շուտ խեղկատակութեան էր նմանում։ Դերակատարների անփոյթ և անբնական խաղն էլ իւր կողմից լրացնում էր այդ խեղկատակութեան ամբողջ այլանդակութիւնը։ Պէտք է նկատել, որ այդպիսի մի դատարկ ու անբովանդակ «պիես» անտեղի և ամօթ էր հրամցնել նոյն գիշերուայ հասարակութեան, թէպէտ, պէտք է խոստովանել, վերջին կարգերում բաւականին ծիծաղ էր յարուցանում։

Երկու պիէսների միջոցում բեմի վրայ և անտրակտներին կորիդորում նուագում էր ռուսաց երաժշտական խումբը ղեկավարութեամբ պ. Ալ.Ժակի, որ իւր կողմից լրացնում էր երեկոյթի բովանդակութիւնը։

Կար բաւականին հասարակութիւն։ Կարգապահութիւնը թոյլ էր՝ մանաւանդ վերջին շարքերում։

Երեկոյթը յայտարարուած ժամից մի ժամ ուշ սկսուեց, ուստի և պարահանդէսին շատերը արդէն չսպասեցին։

R.

ԼՈՒՐԵՐ

Թաւրիզ

«Միտքի» յաջորդ համարից կտանք յայտնի արևելագէտ և իսլամագէտ՝ պրոֆէսսոր Արմենիուս Վամբերիի «Տաճկաստանի անկման պատճառները» (The Reason for Turkey's Débâcle) վերնագրով այժմէական յօդուածի թարգմանութիւնը, կատարուած Անգղ. Review of Reviews յայտնի ամսագրից։

Յունվար 21-ին Ատրպատականի ընդհանուր նահանգապետ Սիպեհտար Աազամը թողեց Թաւրիզը և Զուլֆի վրայով մեկնեց Եւրոպա։

Ամսոյս 19-ին Բաղը շումալի մօտերը, գիշերուայ ուշ ժամին, երկու ռուս զինուորներ անյայտ տեղից և անյայտ անձանցից ենթարկուում են

գիայի և Կասիայի մասին։

—Բո քոյրն էլ «այդ գործով» է զբաղուած։

—Այո՛ ես ինքս նրան դուրս հանեցի փողոց, «աշխարհ»։

—Իսկ նա փոքր է քեզանից։

—Այո, նա միայն 14 տարեկան է և երեք ամսական։

—Իսկ նա վաղուց է որ «դրանով» է զբաղուած։

—Կարծեմ երկրորդ տարին է, բայց դուցէ և երրորդ։

Սուրսուռ անցաւ երիտասարդ Նէֆցէի մարմնով։

Բայց ինչպէս ես դու դրանով զբաղւում, եթէ դու հիւանդ ես։

—Ի՞նչ անենք, որ հիւանդ եմ. կցանկայիք որ քաղցից սովամահ լինէինք. իսկ նա, որի պատճառով ես այսպէս դարձայ, նա, հարցնում եմ, հոգաց իմ մասին. էլ ինչ արած, պատմեմ բոլորին իմ հիւանդութիւնը. այսինքն մենք բոլորս էլ հիւանդ ենք...

-Իսկ ինչու համար դու ինձ ասացիր...

Աղջիկը նայեց երիտասարդի վրայ։

Ես խղճացի ձեզ, պատասխանեց նա։ Մեր եղբայրը առողջ է թէ հիւանդ, միևնոյն է նրա համար. նա առանց այն էլ հոգիս է շնչում. կա բանուոր է, նիհար գունատ և ... թշուառ։ Իսկ դուք, դուք այնպէս դեղեցիկ էք վարդայտ ու հարուստ։

—Բայց չէ՞ որ դու կարող էիր այդ բոլորի փոխարէն վրէժխնդիր լինել ինձանից ընդհատեց նրան երիտասարդը ու քաշ գցեց իր գլուխը, կարծես մի նոր ծանր միտք ճնշում էր նրա ուղեղը։

Աղջիկը բարձրացրեց իւր գլուխը։

—Իսկապէս որ, ասաց նա, իրաւ, ես կարող էի վրէժխնդիր լինել և գոհացումն ստանալ։

Երիտասարդը թոյլ գրկեց նրան և ասաց քնքշութեամբ։

—Նստենք։

Ու հոգածութեամբ նստեցրեց աղջկան գերանի վրայ։

Իւզիան նստեց։

—Ինչու՞ նստենք մենք այստեղ, հարցրեց նա։

—Այնպէս, նստենք, տես ինչ գեղեցիկ է վերջալոյսը, կխօսենք կզրուցենք։

—Արևը մայր է մտնում,—կրկնեց աղջիկը կարծես չհասկանալով իր ասածի միտքը —էհ ինչ անենք որ...

—Նայենք չէ՞ որ գեղեցիկ է։

—Գեղեցիկ է, գեղեցիկը գեղեցիկ է, բայց ժամանակ չկայ զուարճանալու այդ գեղեցկութեամբ։

—Սովորաբար այս ժամին դու ինչ ես անում։

-Դուրս եմ գալիս զբօսնելու քաղաքում, ինչպէս և այսօր։

—Այ՞ո, ճանապարհի վրա՞յ, մեզ մօտ։

—Այո՛ ձեզ մօտ, իսկ քոյրս ահա այնտեղ ջրաղացի մօտ զբօսնում է, իսկ գիշերը մենք հանդիպում ենք իրար «Դատարկ ձոր» կոչուած տեղում և պատմում ենք իրար մեր աշխատանքի մասին։

—Իսկ ձեզ շատ են տալիս։

—Ինչպէս պատահում է, 5, 10, 15 կոպէկ, իսկ երբեմն գտնուում է նաև այնպիսի յիմարը, որ 30 կոպէկ է տալիս։ Այդպիսիները շատ են զինուորականների մէջ։

—Իսկ ձեզ նման շատերը զբօսնում են այնտեղ, ինչպէս դուք։

-Այնտեղ երկաթուղու գծից մինչև մարգագետինը միայն ես, քոյրս և Մանիան ենք, ուրիշներին արգելում ենք զբօսնել, քարերով հալածում ենք։

-Նո՛ւ, իսկ եթէ դուք անցնէք զբօսնելու մի այլ տեղ։

-Մեզ էլ քարերով կհալածեն։ Միանգամ Մանիան հարբած դրութեան մէջ, անգիտակցաբար անցել էր մարգագետնից այն կողմ և, ինչ էք կարծում, նրա հօրաքրոջ աղջիկը կաւէ ամանի կտորով պատռել է Մանիայի աչքը։ Այլ կերպ անկարելի է, այդպէս է մեր օրէնքը։

Երիտասարդ Նէֆցէն նստեց կոճղի վրայ և սկսեց ծխել։

—Ինձ էլ պապիրոս տուէք, խնդրեց աղջիկը։

—Լաւ կտամ, միայն նստի՛ր։

—Կնստեմ ...

Եւ նա նստեց։

Հեռուում հարթութեան վրայ սրփռուած էին յուլիսեան արեգակի ծիրանեգոյն վերջալուսի վերջին շողերը։ Այնտեղ հեռու հորիզոնում այրուում էր կէչի անտառը կապոյտ մանիշակագոյն կարմիր բոցով։ Այդպիսի գոյներ արտացոլում են նաև երբեմն, մաքուր, անամպ, ցերեկուայ տապից շիկացած երկնքի վերայ։ Մօտակայ դաշտերից փչեց զեփիւռը և օդը լցուեց անուշահոտութեամբ։ Լսուեց գորտերի կռկռոցը և ամառային երեկոն յամրընթաց խաղաղ ալիքների նման տարածւում էր ու փուում երկրի վրայ։ (Շար.) Ա.

ՅԱՐԳԱՆՔ ՁԵԶ.

Յարգանք ձեզ ընկեր «իւնիուս թուրքեր»,
Դուք խորտակեցիք անյաղթ ձեր կուռքեր,
Անկուշտ բորենուն խիզախ սանձեցիք,
Մեռանող երկրին կեանք ներշնչեցիք։
Բայց դեռ կանգուն է մեր լկտի Բահաղ,
Լափում է անյագ մեր կեանքեր մատաղ։
Դեռ բարձրանում են սև կախաղաններ,
Դեռ շառաչում են սարսուռ շղթաներ.
Որպէս գերեզման, բացած բերաններ
Զոհ են սպասում դաժան, մութ բանտեր։
Եւ դեռ արշալոյս ծագում է երկչոտ
Հարազատների արիւնի միջից,
Դեռ բիւր զոհերի մոմուռը ցաւոտ
Վրէժ է կանչում տանջարաններից։
Արիւնոտ հետքեր, արիւնոտ ձեռքեր
Կազմում են զարդը մեր պալատների։
Նոր ձայն, նոր շփոթ խեղդում են, զսպում
Մեր նշանաբարդ դահիճներն արի։
Ցոշոտուած դիեր, ջախջախուած գանգեր—
Միակ միջոցը կարգապահութեան.
Մտրակ ու գնտակ միակ ապաւէն
Արիւնոտ գահի գազան բռնութեան։
Բայց փոյթ չէ ընկերք, չենք լռի երբէք.
Կտանք մեր կեանքերն ազատ, անխնայ։
Տիտանը զարթեց, մեծ համբը խօսեց-
Մահ ու աքսորից՝ էլ չենք վախենայ։

Էմիլ

հրացանագործութեան։ Զինուորներից մէկը անմիջապէս մեռնում է, իսկ միւսը վիրաւորւում։ Ասում են սա երկրորդ անգամն է, որ ռուս զինուորների, վրայ յանկարծական յարձակում է գործւում։

Դեկտ. 23-ից Թաւրիզում—Ղալայ Թաղ-բողոքականների ժողովարանի դիմաց-բացուել է պ. Ս. Յովհաննիսեանի ձեռամբ Apollo անուամբ սինեմա-թատրոն։ Նոյն շէնքում նոր բան կից է մի նորաբաց հիւրանոց-Գրանդ-Օտել-ելեքտրական լուսաւորութեամբ Առաջին հիւրանոցը Թաւրիզում։

Մեր թերթի առաջին համարներում կոչ էինք արել հայկական մի կլուբ վերաբանալու։ Գրանդ Օտելի բացմամբ բացուել է մի կլուբ նոյն հիւրանոցի վերնայարկում երեք սենեակներով։ Տեղը փոքր է, արժէր ձեռնարկողները աւելի ընդարձակ և յարմար բնակարան գտնէին և մուտքն էլ աւելի մատչելի դարձնէին։

Փետրուար 2-ին շաբաթ գիշեր, Արամեան դպրոցի ուսուցչական խումբը տալու է մի ներկայացում, Տոմսակները ծախուելու են Փարիզ մագազինում և ուսուցիչներ պ. պ. Մել. Աբրահամեանի և Վ. Վասիլեանի մօտ

Ներկայ տարում ևս բաժանորդներին մենք անդորրագիր չենք տայ, այլ նրանց վճարումների մասին կյայտնենք թերթում։

Թերթերից և մասնաւոր նամակներից իմանում ենք, որ Աւրպատականի թեմի առաջնորդ է նշանակուել Բարձր. Ն. Վարդապետ Մելիք Թանգեանը, որը, ինչպէս լսում ենք, արդէն էջմիածնից մեկնել է Կովկաս հանգամանակութեան թեմի կարիքների, գլխաւորապէս առաջնորդարանի համար։

Դէյխարղանի էջմիածնապատկան կալուածի և ծառերի թալանման և անտէր մնալու մասին մեր ձեռամբ առաջնորդարան մի թուղթ յանձնուեց. սպասելի է որ մեր առաջնորդարանը ազատի թալանի մատնուած կալուածը և կփրկի այդ աւարառու այգեպանից։

Վերջին վիճակագրական տեղեկութիւնը ցոյց է տալիս, որ ներկայումս Թաւրիզի հայերի թիւը 665 տունից չէ անցնում, որից Լիլաւայում կամ աւելի ճիշտ, ս. Սարգիս եկեղեցու ծխականներ 495 տուն, Ղալայում 170 տուն։

1912 թուին թաղերում եղել է 92 ծնունդ, 28 պսակ, և 53 մահ։

Աւրպատական.

Ուրմիա.

Երկու ամիս առաջ քաղաքի շրջակայքում անյայտ մարդկանց ձեռքով սպանուեց մի վրացի բանուոր. այդ առթիւ տեղական իշխանութիւնը 2000 թումանից աւելի տուգանք նշանակեց մօտակայ գիւղերի վրայ։

Ի միջի այլոց տուգանքի ենթարկուեց նաև Գեարդաբադ զուտ հայաբնակ գիւղը որ քաղաքից 8 վերստ հեռու է . . .

Գեարդաբադցիների դիմումներն անցան ապարդիւն։

Ներկայումս խիստ ցաւալի պատկեր է ներկայացնում, Ուրմիոյ հայերի վիճակը, տեսնենք վերջապէս առաջնորդարանը և Հ. ծայրագոյն իշխանութիւնը երբ պիտի ուշադրութիւն դարձնէ իր կորուստի մատնուած ժողովրդի վրայ։

Սուլդուզ

Կարափափախ ադաների կեղեքումները անցնում են չափից, հայ և ասորի գիւղացիութիւնը գրկանքը տանել չկարողանալով, դիմում են Ուրմի օտարադաւանութիւն ընդունելու։

Շուտով Թաւրիզում լոյս կտեսնի ,,ԽՕՍՔ" անունով պատանեկան անկուսակցական մի երկամսագիր, որ ունենալու է գրական, բանասիրական և անտեսական բաժիններ։

Բաժանորդագինը Թաւրիզում տարեն 6 ղռան։

Աղքատախնամի վարչութիւնը Տր. Օհանեան Մհտր. Ալէքսանի ծննդեան տօների առթիւ ստացել է 10 թուման

Յոբելենական 60 ամեայ յանձնաժողովի անունով ստացուել է արդէն Վեհափառ Կաթողիկոսի օրհնութեան կոնդակը։

Ներկայացումներ Արամեանի դպրոցի օգտին.

1912—1913 Յունվ. 1ը

Ինչպէս նախորդ տարիներում, նոյնպէս և այս ուսումնական տարուայ ընթացքում Արամեան դպրոցի ուսուցչական խումբը տուեց մի շարք լուրջ ներկայացումներ յօգուտ դպրոցի։

Արդէն ուշ համարելով այդ ներկայացումների մասին ռեցէնզիաներ տպելը, շտապում ենք յիշատակել թէ այս տարի ինչեր և երբ են բեմ հանել Բերդաթաղում։

1) Նոյեմբեր երեքին Շիրվանզադէի «Պատուի համար» դրաման.

2) Դեկտ. 2-ին Ձր. Կոպէի «Թագի համար» ողբերգութիւնը։

3) Դեկտ. 20-ին Շիրվանզադէի «Արմենուհի» դրաման։

4) Յունվար մէկին տօնածառ և ներկայացում, տրուեց նաև «Դաստիարակութիւն» կատակերգութիւնը։

ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Հանդէս Ամս. № 1 և 12, 1912 թ.
2) Բազմավէպ № № 7-8-9, 10-11,
3) Կայծ № 3-4 և 5, (Կ. Պոլիս]
4) Կոհակ № 47,48, 49
5) Ազգ (Բոստոն) 29 և 30
6) Յուշարար - Թատերական պատկերազարդ գրական գեղարուեստական Ալմանախ գ. շրջան գիրք ա. Հոկտեմբեր 1912 թիւ
8) Բողբոջ (Մարզուան) № 13-14.15
9) Պայքար (Ագարագար) № 8
10) Նոր-Ջուղայի կենտրոնական Գ. Քանանեան և Ս Կատարինեան Ազգային երկսեռ դպրոցների և Գ. Քանանեան մանկապարտէզի

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1912թ. տպարան ս. Ամենափրկչեան վանաց Ջուղա Սպահան
11) Թօֆիղ توفق № 1-7 պարսկերէն, Թաւրիզում տպուող
12) Հանդէս Ամսօրեայ №1-2, 1913թ.
13) Նոր Ջուղայի ամենափրկչեան Ս. վանքի տպարանը 1640-1912, Նոր Ջուղայ տպ. ամենափրկչեան ս. Վանքի. 1912 թ. 2 օրինակ.14]«Հովիտ»№№1-2
15) «Մշակ № 1-12։

16)Turkish Atrocities the Young Turks and the truth about the Holocaust at Adana in Asia Minor During April. 1909

By the Auther of «Turkey and the Turk»

17) Հնչակ № 1 1913 Փարիզ

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„МАГАЗИНЪ ПАРИЖЪ"

PROPRIÉTAITE J. D. THOMASSIAN

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Վաճառւում են տղամարդկանց կանանց և երեխաների ամեն տեսակի հագուստեղէններ և կալանդերէյնի ապրանքների մեծ ասորտիմէնդ։

Վերջին անգամ նոր ստացուել են կանացի փէշեր, եւ խալկաներ, սպիտակեղէններ, կորսեթներ և ընտիր բրդեայ շապիկներ և այլն։ Երեխաների զգեստներ, գլխարկներ և պալտօներ։ Տղամարդկանց գլխարկներ, ճլ. թանէ եւ բրդէ շապիկներ դիւրամատչելի գներով։

Նաւթով գործող Եւրոպական վառարաններ և բաղանիքներ, որոնցից երկուսը վճակախաղի են դրուել։

ԱՆՀԵՐՔԵԼԻ ԱԺԱՆՈՒԹԻՒՆ

Շտապեցէք այցելել և փորձել.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

,,ՂԱՐԱԴԱՂ" Պատկերազարդ-հանրամատչելի ամսագրի 1913 թ. երկրորդ տարի։

1913-ին բաժանորդները կստանան 12 պատկերազարդ համարներ մաքուր տպագրութեամբ և հետաքրքիր բովանդակութեամբ իւրաքանչիւր համարը բաղկացած 32-48 երեսներից։

1913 թիւ հրատարակութիւնը միանգամայն ապահովուած է։

,,Ղարադաղը" ամենաէժանագին թերթերից մէկն է։

ԲԱԺՆԵԳԻՆՆ Է՝

Թաւրիզում տարեկան 6 ղռան.
Պարսկաստանում ,, 8 ղռ.
Արտասահմանում ,, 1.50 րուբլի կամ 3 ֆրանգ.

,,Ղարադաղի" Խմբագրատունը, որ գտնւում է Ղալայում Դոքտոր Սարգսի բժշկարանին կից, բաց է ամեն օր եր. ժ. 4-7-ը, կիւրակի օրերը առ. ժ. 9-12-ը։

Մեր հասցէն՝ Tabriz (Persujo) Redaktejo ,,Karadag"

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԻ ՄԱԳԱԶԻՆ

„ՄՈՍԿՎԱ"

ԸՆԿ. Ե. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ ԵՒ ԵՂԲ.

(Ղալա թաղ ,,ԱՊՕԼԼՕ" սինեմատօգրաֆի դէմ առ դէմ)

Ծախւում է ընտիր մետաքսեղէն, քաթանեղէն, լաւ տեսակի սպիտակեղէն և ամեն տեսակի չիթեղէն։ Ծախւում են դպրոցական աշակերտ-ուհիների ամեն տեսակի համազգեստի կտորներ, կանացի շալեր, պատրաստի շապիկներ, շալէ և մետաքսէ ընտիր վերմակներ, ռուսական ընտիր ադէալներ և գործածութեան ամեն տեսակի թաշկինակներ։ Շուտով ռուսական յայտնի ֆիրմաներից կստացուեն նոր ապրանքներ։ Առանց սակարկութեան և մատչելի գներ։

ՎԱՐՁՈՒ Է ՏՐՒՈՒՄ

4 սենեակից բաղկացած մի բնակարան իւր բոլոր յարմարութիւններով։ Դիմել Մահտեսի Ալէքսան Տէր Օհանեանին

ОДТАЕТСЯ КВАРТИРА съ 4-хъ комнатъ со всѣми удобствами, обращаться Г-ну Алексану Теръ-Оганову

Թաւրիզ Մհտ. Ա. Տէր Օհանեանին — Շնորհակալութեամբ վարդուց ստացել ենք Ձեր 14 ղռանը ի նպաստ «Միտք» ի Բ. տարուայ բաժանորդագրութեան։

Թաւրիզ օր. Թ. Գորայեան. Ձեր գեղեցիկ յօդուածը կանանց կրթութեան առթիւ կտպուի։

Մոսկվա Սոկրատ խան Գելօֆեանին։ Ձեր շահեկան յօդուածը Պարսկաստանի անտեսական կացութեան մասին կտպուի։

ՏՊԱՐԱՆ „ՓԱՐՈՍ"